ԱՐԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ Պ. ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ <<ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ>> ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

Հայոց պատմության նկատմամբ շատ մեծ է մեր ժամանակների անվանի վիպասան ու դրամատուրգ Պ. Զեյթունցյանի հետաքրքրությունը: Ժողովրդասեր ու հայրենապաշտ գրողը իր ստեղծագործություններում անդրադառնում է հայոց պատմության՝ դրամատիկական իրադարձություններով լեցուն ժամանակահատվածներին, ուր անգամ անշան համարվող պատմական փաստերը տաղանդավոր գրողի գրչի տակ ստանում են միս ու արյուն, պատմական կերպարները, իրենց պատմականությունը պահելով հանդերձ, ձեռք են բերում հոգեբանական – անհատական համոզիչ հատկանիշներ ու դառնում կենդանի, վառ ու գունեղ կերպարներ:

Պատմությունից ինչ է հայտնի չորրորդ դարի դեպքերի ու դեմքերի մասին: Շատ բան: Եվ այդ <<շատ բանի>> համար հայ պատմագրությունն ու գեղարվեստական գրականությունը մեծապես պարտական են հայ պատմիչներին, մասնավորապես Փավստոս Բուզանդին, պատմավավերագեղարվեստական բացառիկ արժեք ներկայացնող նրա <<Հայոց պատմությանը>>, որի թեմաներով գրվել են բազմաթիվ ստեղծագործություններ՝ դրամատիկական գործեր, պատմավեպեր, պոեմներ::

Հայ գրողների պատմավեպերի մեջ իր ուրույն տեղն ունի Պ. Զեյթունցյանի <<Արշակ Երկրորդ>> պատմավեպը: Մեր կարծիքով՝ գրականագիտությունը դեռ արժանին չի մատուցել անվանի գրողի այս հրաշալի պատմավեպին, որն աչքի է ընկնում գաղափարական հագեցվածությամբ, պատմական փաստերի ու կերպարների համարձակ ու թարմաշունչ մեկնաբանություններով, որոնք որոշակիորեն տարբերվում են հինգերորդ դարի պատմիչի՝ իրականության ռոմանտիկական փոխանձնություններից: Այդ տարբերությունը պատճառաբանենք Աբեղյանի բացատրությամբ. << Ինչի՞ց է առաջանում այդ տարբերությունը: - Ամենից առաջ նրանից, որ վեպը պատմություն չէ, այլ բանաստեղծություն. Վիպասանը պատմագիր չէ, այլ բանաստեղծ: Նրա նպատակը չէ կատարված եղելությունը ճշտությամբ վերարտադրել: Նրա խնդիրն է հարկավոր ձևով լուսաբանել պատմությունը: Այդ պատճառով նա պատմությունից չի առնում ամբողջը, այլ միայն նրա մեկ մասը: Բացի այդ՝ նա պատմությունը փոփոխության է ենթարկում և տալիս է կատարված իրականությանն իր

ժամանակի պահանջի համեմատ սոցիալական արժեքավորում, որոշ սոցիալական իմաստ: Կնշանակի՝ վիպասանը պատմությունից ստեղծում է այն, ինչ ուզում է ինքը, իր ունկնդիրը>>:[1] Պ. Զեյթունցյանը իր վեպը գրել է իր ժամանակի, իր ժամանակակիցների համար, արդիահունչ հարցեր բարձրացնելու և նրանց պատասխանները յուրովի տալու միտումով:

Հզոր, անկախ, միասնականությամբ համախմբված, կենտրոնաձիգ պետականություն ունեցող Հայաստան երկիր ունենալու երազանք-գաղափարն է ընկած <<Արշակ Երկրորդի>>, նրա գլխավոր հերոսների գործունեության հիմքում: Ովքե՞ր են նրանք: Արշակը, Ներսեսը, Փառանձեմը, Գնելը, Հայր Մարդպետը, Վասակը և այլք: Մենք կփորձենք հոդվածի շրջանակներում սեղմ գծերով ներկայացնել պատմավեպի երկու գլխավոր կերպարներին՝ Ներսես Մեծ կաթողիկոսին և Արշակ թագավորին՝ որպես Զեյթունցյանական ինքնատիպորեն թարմ ու հետաքրքիր մեկնաբանություններով կերտված պատմական կերպարներ, որպես անկախ ու ազատ հայրենիք ու ժողովուրդ ունենալու սեռուն նպատակադրում ունեցող երկու եռանդաշատ, հրաշքներ գործելու ընդունակ, բայց և միմյանց հակասող ու բացառող մարդ, որոնցից յուրաքանչյուրը խոչընդոտ է դառնում մյուսին...

Հանրահայտ ճշմարտություն էր, որ ուժեղ երկիր լինելու համար հարկավոր էր ունենալ հզոր թագավոր և հոգևոր հզոր առաջնորդ: Արշակը Ներսեսի մեջ էր տեսնում այդ ուժը, այդ ուժը իր մեջ նաև Ներսեսն էր զգում, ուստի պատահական չէ, որ պատմավեպն սկսվում է Արշակի կողմից Ներսեսին հարկադրաբար կաթողիկոս դարձնելու դրվագով:

Արշակը ճիշտ ընտրություն էր կատարել. Նա գիտեր՝ Ներսեսը ձեռնասուն չի դառնա, գիտեր, որ կաթողիկոսությունը վերադարձնելով Գրիգոր Լուսավորչի տոհմին՝ ուժեղացնում է հունասերներին, որոնց չէր համակրում, բայց պարսկասերները հզորացել էին, և նրանց ուժը լրջորեն անհանգստացնում էր արքային: Հարկավոր էր հավասարակշռություն ստեղծել: Իսկ Ներսեսը նայել գիտեր, խոսել գիտեր:Փառահեղ արտաքին ուներ: Ժողովուրդը կգնա նրա հետևից:Կհավատա նրա խոսքին:Արշակին Ներսեսի պես այր էր հարկավոր. Չէ՞ որ կաթողիկոսը հավասար է արքային. Նա է երկրի երկրորդ դեմքը:

Կտրելով դարերի հեռավորությունը՝ գրողը բերում, ընթերցողի առաջ է կանգնեցնում քրիստոնյա Հայաստանում ապրած թերևս ամենամեծ կաթողիկոսին, լուսաբանում նրա ապրած ժամանակահատվածը, նրա ամենամարդասիրական երազանքներն ու իրականացրած ծրագրերը,

---

[1] Մ. Աբեղյան. Երկեր. Եր. 1966, էջ 224-225:

որոնք նաև անվանի գրողի ու յուրաքանչյուր հայի նվիրական ցանկությունն էին հոգևոր տիրոջ իդեալ կերպարի վերաբերյալ։

Եվ այսպես՝ Ի՞նչ խոհեր էին պաշարել դեռ չօծված կաթողիկոսին. ուրեմն՝ մինչև մահկանացուն կնքելը իրեն պիտի նվիրաբերի ուրիշների, պիտի անընդհատ բարի՛ք գործի, պիտի ապրի անանձնական կյանքո՛վ, լուսավորություն ու մարդասիրությու՛ն պիտի սերմանի իր խաչված երկրում, որտեղ թռչունների պես չվող բազում մայրաքաղաքներ են եղել, տեղից տեղ փախչող շքեղ ու վախեցած մայրաքաղաքներ, որտեղ ոչ թե մտնում, այլ իջնու՞մ են տուն՝ զետնափոր, անդուռ, անլուսամուտ, մարդկանց ու անասուններին բաժանող միջնորմ - վարագույրով...

Լի անհուն վճռականությամբ՝ ամենուրեք դպրոցներ պիտի հիմներ, բացեր անկելանոցներ, ուրկանոցներ, աղքատանոցներ, որբանոցներ, հիվանդանոցներ, օթևաններ՝ ճամփորդների ու օտարականների համար, վերացներ մուրացկանությունը, ապա պիտի հորդորեր թագավորին, նախարարներին, բոլոր հարուստներին ու իշխանավորներին՝ զուր ունենալ ծառաների, ստորադրյալների ու աշակերտների հանդեպ, ծանր հարկերով չնեղել նրանց, քանի որ աստված ընդհանուր է ամենքի համար։ Մարդուն աստծու պես կատարյալ ու անթերի տեսնելու նարեկացիական մղմամբ՝ Ներսեսը նաև պիտի արգելեր մերձավորների ամուսնությունը, արյունախառնությունը, բազմակնությունը անասնական ախտերը, հարբեցողությունը, սուտ երդումը, արվագիտությունը, իգությունը, անասնագիտությունը, մեռելներին ողբալու հեթանոսական կարգը՝ երաժշտական գործիքների նվագակցությամբ, հատուկ պարերով, ինքնակեղեքումով, ոճիրներով...

Հեղինակը մերթ դառնում է նրան տանջող հույզերի թարգմանը, մերթ նրան կանգնեցնում ընթերցողի առջև՝ ներքին դրամատիկ մենախոսությամբ։Այնքան կենդանի է հնչում նրա ձայնը, այնքան դառնաթախիծ են նրա ձայնի ելևէջումները, որ ընթերցողը կենդանի հաղորդակցության մեջ է մտնում նրա հետ։ Հզոր, առնական, աշխարհիկ հաճույքները վայելած այրը պատմավեպի սկզբում հանդես է գալիս աշխարհիկ կյանքով ապրելու և նրանից հարկադրաբար հրաժարվելու իրարամերժ զգացումների հուզախռով պոռթկումներով, որոնք այնքա՞ն բնական են ու մարդկային։ Պ.Չեյթունցյանը միանգամից սրբի հանդերձներ չի հագցնում Ներսեսին։ Նա ամենից առաջ մարդ է՝ առողջ բանականությամբ ու տրամաբանությամբ, արդեն որդեգրած մեծ ու պատասխանատու գործը ամենայն սրբությամբ կատարելու աննահանջ նպատակադրմամբ։ Եվ կերպարակերտման այս ինքնատիպ յուրահատկությունը դառնում է պատմավեպի մեծագույն արժանիքներից մեկը։ Կեսարիայում կաթողիկոս օծվելուց հետո վերա-

դառնալով Հայաստանի՝ իր անսահման իրավունքներն ու երկրի բախտի ու ճակատագրի հանդեպ ունեցած մեծ դերի գիտակցումով Ներսեսը կանգնում է Արշակի առաջ՝ որպես երկրորդ տեր ու պատասխանատու: Չնայած անհանդուրժողը երկրում տիրող բարքն է, կառուցվող Արշակավանը, որ լցվել է տերերից փախած ծառաներով, որ ջնջվել են տիրոջ ու ծառայի սահմանները, որ անիշխանություն է տիրում, որ արթնանում են մարդկանց մութ բնազդները, իսկ նախարարների հետ նրա անհաշտությունը ներթափանցում էր նոր հակամարտությունների հորձանքի ժայթքում...Երկու հզոր ուժեր կանգնած են միմյանց դեմ, երկուսն էլ հոգում են ժողովրդի մասին, երկուսն էլ ուզում են, որ մարդասիրություն իշխի երկրում, բայց արքայի փաստարկները ավելի զորեղ են. եթե Ներսեսը ուզում է իրագործել իր բարեգործությունները, պիտի հասկանա, որ դա հնարավոր է միայն արքայի օգնությամբ, նրանից անհրաժեշտ հողեր և գումար ստանալու դեպքում: Իսկ այդ պարագայում արդեն նա չպիտի խառնվի Արշակավանի գործերին...Եվ հետո՝ Արշակի համար կա ևս մի չափազանց կարևոր՝ երկրից արտահոսքը կանխելու այսօր էլ խիստ արդիականություն պատճառ՝ Արշակավանի կառուցումը արդարացնելու համար. <<Մինչև ե՞րբ Պարույր Հայկազինները պատպարել չպիտի գտնեն իրենց հողի վրա և օտար երկրներ մեկնեն: Մտածե՞լ ես երբևիցե, թե ինչու ոչ ոք այս երկրում մեծություն չի դառնում: Քթներիս տակ ապրում են, իսկ մենք չենք էլ նկատում, բանի տեղ էլ չենք դնում: Բավական է օտար տեղ ընկնեն ու համբավի տեր դառնան, որ մենք հպարտանանք նրանցով, կուրծք ծեծենք, երդվենք նրանց անուններով: Մինչդեռ այդ մարդկանց պահել, պահել պիտի կարողանալ>>:

Բախումը արքայի և կաթողիկոսի միջև անխուսափելի էր, և քանի որ մինչև այդ հույն եկեղեցուն ենթակա հայ եկեղեցին արդեն դարձել էր անկախ ու ինքնուրույն, արքան կարող էր դժգոհության դեպքում կարգալույծ անել կաթողիկոսին...

Այստեղ պատմությունն ասում է, որ 359 –ին դժգոհելով Արշակ Բ-ի՝ որոշ հայ նախարարական տների հալածելու քաղաքականությունից՝ Ներսես Ա-ն թողել է կաթողիկոսի գահը:Մոտ 364-ին Արշակ Բ-ի խնդրանքով կրկին նստել է կաթողիկոսի աթոռին և որպես հայ նախարարներից կազմված պատվիրակության ղեկավար՝ մեկնել է Կ.Պոլիս՝ հայ – բյուզանդական հարաբերությունները կարգավորելու նպատակով, բայց ապարդյուն:

<<Արշակ Երկրորդի>> վիպական գործողությունների զարգացման ընթացքում գրողը ի վերջո ի՞նչ լուծում էր տալու արքայի ու կաթողիկոսի հետզհետե սրվող հակամարտությանը:Ահա նրանց վերջին հանդիպումը.

երկու ծերացած մարդիկ, որոնք կրել էին հոգսերի բեռան տակ: Խամրել էր նրանց աչքերի փայլը, արյունն այլևս չէր խնդթանում նրանց երակներում: Տար – տար հագած – կապած էին նրանք. Արքան բուրդ էր փաթաթել մեջքին, որովհետև բազում թշնամիներին ավելացել էր մեկը՝ մեջքի ցավը: <<Երկու առյուծ, որոնք դեռ մի քանի տարի առաջ կարող էին բորիկ քայլել սառույցի վրա, որոնք կարող էին ցուրտը որպես շապիկ հագնել մերկ մարմիններին>>: Դա հրաժեշտի հանդիպում էր՝ լի ցավով ու ծանր հիշողություններով, անցածին ու արածին տրված գնահատականներով: Միավորման գաղափարը արքան չկարողացավ իրագործել որպես աշխարհական, Ներսեսն իրականացրեց որպես հոգևոր առաջնորդ՝ մարդասիրության սերմեր շաղ տալով չորս բոլորը: Արքան հրեշտակ չէր, բայց և ոճրագործ չէր. Նրա դաժան քայլերից ոչ մեկը անձնական հիմք չուներ: Իսկ կաթողիկոսի մեղքը ո՞րն է. Իր անքուն գիշերնե՞րը, իր անանձնական կյա՞նքը, դպրոցներում գրագիտություն ուսուցանե՞լը, ծերանոցներում հանգիստ մեռնող զառամյալնե՞րը, ուրկանոցներում աշխարհից պատսպարված բորոտնե՞րը, աղքատանոցներում մի պատառ հաց ուտող թշվառնե՞րը, թե՞ օթևաններում հանգստացող ճամփորդները: Բայց ահա նա մեղք է գործել. սպանել է տվել Հայր Մարդպետին /թեև այդտեղ էլ խառն էր արքայի մատը/ ու արյունոտ ձեռքերով այլևս հովիվ լինել չի կարող: Կաթողիկոսի հրաժարականը արքայի փափագն է եղել:

Անսքող ջերմությամբ է Պ.Զեյթունցյանը կերտել ճանաչողական ու դաստիարակչական արժեք ունեցող Ներսես Մեծի կերպարը, որ դարերի հեռավորությունից գալիս, կանգնում է մեր կողքին՝ որպես մարդ ու որպես սուրբ: Նա հրաշալի զինվոր էր ու սենեկապետ: Այնպիսի վստահությամբ ու հավատով էր նետվում կռվի, որ թշնամու նետը սիրտ չէր անում նրան խոցելու: Ռազմի դաշտը խաղ ու պար էր նրա համար, տարերք ու մղումը: <<Նրա կատաղի հայացքը տեսնելով, նրա կրակոտ բոց աչքերին հանդիպելով՝ պարսիկն ու բյուզանդացին նախապես հասկանում էին, որ իրենց բախտը չբերեց այս անգամ, որ ուրիշ մի ճար չունեն, բացի մեռնելուց>>: Ճակատամարտից նա միշտ վերադարձել է գինովցած ու թեթևացած ու տրվել կանանց ու խմիչքներին: Նրան միայն սիրել են ու ատել: Շատ են սիրել ու շատ են ատել:Երբեք գլուխ չի ծռել, չի թքնել, չի շողոքորթել, չի ձգտել պաշտոնի, փոքրի հետ՝ փոքր, մեծի հետ մեծ է եղել: Բոլորի՝ թե՛ զինվորի, թե՛ շինականի հետ վարվել է ինչպես հավասարը հավասարի հետ: Անգիր է իմացել հույն ու ասորի իմաստասերներին: Սովորել է լեզուներ, ուսուցանել Կեսարիայում: Հաղթել է ամեն ինչում: Աստված է վկա, որ հոգևոր առաջնորդի գործն էլ լավ է կատարել: Իզուր չէր, որ նրան կոչեցին Մեծն Ներսես: <<Մեծ>> տիտղոսը ոչ ոք չի կարող

տալ, անգամ արքան, բացի ժողովրդից, բացի նրա հավաքական կամքից: Գերմարդկային ձիգով ու վեհանձնորեն նա հրաժարվեց անցյալից, այն ամենից, ինչ սիրել ու պաշտել էր ու դարձել սուրբ ու անբիծ, ամբողջ էությամբ նվիրաբերվել իր նոր գործին՝ ձգտելով, որ մարդիկ սովորեն երջանիկ ապրել, բախտավոր լինել: Ներսեսը կանխատեսում էր, որ վաղ թե ուշ, այսօր չէ վաղը հայոց թագավորությունը կուլ էր գնալու օտարներին: Ու եթե մի բան մնար, մնալու էր կենտրոնացած ու հզոր հայ եկեղեցին՝ ամենուրեք ցրված իր վանքերով ու աստծու ծառաներով, իր կալվածքներով ու անհատնում հարստությամբ,իր բարի անունով ու հեղինակությամբ: Արքայից բաժանվելուց հետո ծանր ապրումները պաշարել էին նրան. ով է հիմա ինքը. ո՛չ հոգի մարդ է, ո՛չ երկնքի, ո՛չ գինվոր կարող է լինել, ո՛չ հոգևորական, ով է, որտեղ փնտրել իրեն...

Ասելիքը չերկարացնելու ու նաև պատմական աղբյուրի հավաստիացումը ընդգծելու համար Պ. Զեյթունցյանը երբեմն մեջբերումներ է կատարում պատմությունից: Այս անգամ այն վերաբերում է Արշակավանի կոտորածի ժամանակ Ներսեսի մարդասիրությանը. երբ Արշակի դեմ կատաղած հայ նախարարները կոտորեցին տղամարդկանց ու կանանց, բացի ծծկերներից, իսկ նրանց երեխաներին ուզում էին գերի տանել, Ներսեսը թթոցներով նրանց կրել տվեց գոմ և հրամայեց սնուցդ տալ: Նրանք մեծանալով մի ավան կազմեցին, որը կոչվեց Ոռթք /թթոցներ/:

Ներսեսի մեծահոգության ու անհիշաչարության, իր ժողովրդի ու հայրենիքի համար իր անսպառ եռանդը նվիրաբերելու պատրաստակամության մասին է խոսում և այն փաստը, որ նա, չնայած Արշակի հետ գժտված լինելուն, համաձայնում է նրա առաջարկին՝ հաշտության միջնորդ լինելու արքայի և նրա նախարարների միջև...

Արշակի ձերբակալվելուց հետո իշխանությունը իր ձեռքը վերցնելով՝ Փառանձեմը Մուշեղ սպարապետին և Ներսեսին պատվիրակության հետ ճանապարհում է Բյուզանդիա՝ հուսաց կայսրին խնդրելու, որ Պապի հետ օգնական զորք ուղարկեր Հայաստան: Ներսեսը հույս ուներ, որ Պապի օրով նորից կստանա կաթողիկոսության աստիճան և տեր կկանգնի քայքայվող եկեղեցուն և կշարունակի իր բարեգործությունը...

Թե ինչ դեպքեր են կատարվում հետո, կարդում ենք պատմության էջերում... Իսկ Ներսեսի վախճանի մասին Փավստոս բուզանդը և Մովսես Խորենացին հաղորդում են, որ Ն. Ա Մ-ը թունավորվել է Պապի նախաձեռնությամբ: Այլ վարկածի համաձայն՝ նա մահացել է թոքերի հիվանդությունից, որով տառապել է դեռևս Կեսարիայում սովորելու տարիներին:

<<Քրիստոնյա Հայաստան >> գրքի 779-780 էջերում նրա մասին կարդում ենք <<Ներսես Ա Մեծը ծավալել է հոգևոր կրթական մեծ գոր-

ծուներություն, համարվել Հայ եկեղեցու առաջին մեծ բարեփոխիչը: Պայքար է ծավալել պարսկական ազդեցության տարածման դեմ, ոչնչացրել զրադաշտական ատրուշաններն ու մոգության դպրոցները, արգելել պարսկերենի ուսուցումը, ձեռնամուխ եղել Հայաստանում քրիստոնեության տարածման և ամրապնդման գործին: Ն.Ա.Մ. փորձել է մեծացնել եկեղեցու դերը երկրի ներքին կյանքում: Նրա օրոք եկեղեցին դարձել է խոշոր հողատեր և մեծ ազդեցիկ ուժ: Հայ եկեղեցին ս. Ն. Ա Մ-ի հիշատակը տոնում է Խադ եպիսկոպոսի հետ:

Հայ ժողովրդի քրիստոնյա սերունդների համար մեծ ու հզոր բարեպաշտ բարեգործի, սրբազնագույն մեծ կաթողիկոսի անունը պսակված է լուսաճառագայթ դափնիներով...

4-րդ դարի ներքին ու արտաքին քաղաքական կյանքի փոթորկահույզ, լարված ու դրամատիկ իրադարձություններով հագեցած դարում ապրել են նշանավոր հոգևոր ու պետական մի շարք գործիչներ, որոնց մասին հյուսվել են իրական ու լեգենդախառն բազմաթիվ զրույցներ, որոնք այսօր էլ շարունակում են հետաքրքրել հայ զրողներին ու ընթերցողներին:

Ինչպես է Պ. Զեյթունցյանը կերպավորում Արշակին, դրական ու բացասական ինչպիսի հատկանիշներով օժտում, ինչպես գնահատում նրա գործունեությունը:

Պ. Զեյթունցյանը վեպի հենց սկզբից Արշակին ներկայացնում է անելանելի կացության մեջ ու դառը խոհերով: Նրան թագավոր էր կարգել պարսից արքան: Դա բյուզանդացիների աչքում խոցելի ու աններելի կետ էր իր կենսագրության մեջ: Եթե կայսրը նրան թագավոր կարգեր, խոցելի կդառնար պարսիկների համար: Իսկ հիմա կայսրի սիրտը պիտի առներ՝ իշխանություն տալով բյուզանդական կողմնորոշում ունեցող Լուսավորչի տոհմին: Այդ սիրտ խառնող հավասարակշռությունը նողկալի էր Արշակի համար: Եվ ինչու ինքը պիտի որևէ մեկի կողմը բռներ. <<Ների՛ր, սեևեկապե՛տ, ես հանդգնեցի մի պահ մոռանալ, որ փոքր ազգի թագավոր եմ: Եթե ուզում ես մեկին երիցս անիծել , թող փոքր ազգի թագավոր դառնա: ....Խորամանկ պիտի ապրես: Պիտի ապրես թծելով: Վախ ու դողի մեջ: Ամեն քայլդ կախված ուրիշի քայլից>>: Ուրեմն ինքը պիտի կա՛մ հունասեր լինի, կա՛մ պարսկասեր, ինքը իր ուժը չունի: Բայց ո՛չ, ունի՛, ծրագրե՛ր ունի , մե՞ծ ծրագրեր...Մարդկային մի ահռելի ծով, մի հոծ բազմություն, մի ամբողջ հրաբուխ...իր Արշակավա՞նը...Արշակը իր հանդգնությամբ ու հեռատեսությամբ, իր երկրի կախվածությունը վերջապես թոթափելու համարձակ երազանք-ծրագրով ժամանակից առաջ էր ընկնում.<<-Ես արշակավանցիներին արտոնություններ կտամ... Կազատեմ հարկերից... Չեմ թողնի, որ մեկը մյուսի հաշվին ապրի...Եվ նրանք կսիրեն ինձ...

Ատամներով կպաշտպանեն իրենց քաղաքը... Իրենց ազատությունը... Մինչև վերջին շունչը կկռվեն...Էլ ստիպված չեմ լինի սողալու մեկ պարսիկի, մեկ բյուզանդացու առաջ... Եթե վաղը պատերազմ սկսի, էլ զորք չեմ մուրա իմ նախարարներից... Ես իմ սեփական զորքը կունենամ...>>

Արշակը գտել էր իր կյանքի, իր գոյության իմաստը...Ի՜նչ Պարսկաստան, ի՜նչ Բյուզանդիա, ի՜նչ նախարարներ...

Սիրում է Արշակին ընթերցողը, սիրում է ու կարեկցում նրան, նաև մեղադրում սեփական շահերից թելադրված վրեժխնդրության համար: Նա ապրում է մարդուն ու արքային բնորոշ հնարավոր բոլոր տառապանքները, ցավը, երազանքը, դաժանությունը: Փառասեր է նա, բայց և հպարտ. Քանի՞ անգամ էր մերժել կայսրի հրահանգը և նրան զորք չէր տվել պարսիկների դեմ կռվելու համար, քանի՞ անգամ էր զանազան կերուխումների ժամանակ տղայական պարծենկոտությամբ հռխորտացել /բայց իր տանը/, որ Աքիլլեսից էլ ավելի քաջ է ու արի և թքել է կայսրի վրա: Որքա՜ն հաճախ է նա ապրել վրեժի զգացման և մեղքի գիտակցության արանքում, սիրո և ատելության հակամարտության միջև, ինչքա՜ն է զգացել արքայության անգթորեն ճզմող ու կրացնող ծանրությունը:

Իսկ ովքե՞ր են Արշակի հավատարիմները: Դրաստամատը, որ ամբողջ էությամբ նվիրված էր արքային, բայց ոչ Արշակի անձին, Գնելը, որ արքայի հավատն էր, նրա երկրորդ եսը և ավելի կատարյալը: Որպես մարդ՝ նա գոյություն չուներ:Արշակը իր ներկայությունն էր սիրում նրա մեջ, իր լավագույն կեսը. թուլություններից ազատված իր երկրորդ անձը: Զեյթունցյանը նրանց դարձնում է որոշակի գաղափարախոսության կրողներ, որպես պատմության զարգացման ընթացքը խոհեմաբար ու փիլիսոփայորեն ընկալող հեռատես խորհրդատուներ: << Դու պետք է ուժեղ լինես, արքա՛, շատ ուժեղ... Պարտավոր ես ուժեղ լինել: Ուրիշ ելք չունես: Մեզ միավորված հայրենիք է պետք: Եվ այդ գերագույն նպատակի համար չպիտի խնայես ոչինչ: Ո՛չ ու՛ժ, ո՛չ եռանդ: Պիտի ոտնատակ անես ամեն բան: Եթե ճանապարհիդ խոչընդոտ հանդիպի, ձեռքդ չպիտի դողա, դեմքիդ չպիտի կասկած տեսնես... երկիրը պիտի կառուցել, ստո՛վ, սխալո՛վ, ճշմարիտո՛վ, անգամ դաժանությամբ, ամե՛ն ինչով, բայց պիտի կառուցել...>>: Բայց նույն Գնելին սպանելու հրաման տված արքան դեմ է դաժանության զնով անգամ մի քայլ անելուն: << -Դաժանության վրա կառուցված երջանկությունը խարխուլ կլինի>>,- ասում է Արշակը : << -Իսկ մարդասիրությամբ ոչինչ չես կառուցի...>>,- լսվում է Գնելի՝ ասես դարերի խորքից հնչող անառարկելիորեն ճշմարիտ պատասխանը: Սակայն անկանխատեսելի է պատմության՝ դաժան ու հաճախ ցնցող դեպքերով

հարուստ ընթացքը, որ իր արյունոտ հորձանուտի մեջ է առնում նաև պատմավեպի հերոսներին՝ և՝ Արշակին, և՝ Ներսեսին, և՝ Փառանձեմին ...

Արշակը թեև մնծագույն զայրույթով ու դժկամությամբ, սակայն ճակատագրով դատապարտված էր ենթարկվելու հզոր հարևանների կամքին ու պահանջներին: Նրանք խառնվում են ոչ միայն երկրի ներքին կյանքին, այլև անձնական: Կայսրին հետաքրքրում է, թե ինչ նպատակով է կառուցվում Արշակավանը, և նրա դաշնակցությանը վստահ լինելու համար նրան կնության է ուղարկում իր մեռած եղբոր՝ Կոստասի նշանածին՝ Օլիմպիային: Արշակավանի կառուցումը անհանգստացնում է նաև արքայից արքային, և իրենց ուխտը ավելի ամրացնելու համար նա Արշակին կնության է ուղարկում իր քրոջը՝ Որմիզդուխտին: Իսկ Փառանձեմը... Եվ քրիստոնյա թագավորը, որ ժխտում էր բազմակնությունը, այժմ թեկուզ արտաքուստ, պիտի դավաճաներ իր սկզբունքներին: Մի կողմը՝ կրակ, մյուս կողմը՝ ջուր, ու հենց ինքը պատանդ իր սեփական երկրում: Որքա՞ն կարող է խորամանկել, ժամանակ շահել ու պահմտոցի խաղալ երկու կողմերի հետ, երկուսին էլ հավատացնել իր հավատարմության մեջ, երկուսին էլ հնազանդ լինել, երկուսի խոստումներին էլ հավատալ...Արքա լինելը հաճույք չէր, այլ գործ, պարտականություն, զրկանք ու մենակություն:

Արշակ մարդու և արքայի երազանքների ու տառապանքների անփառունակ ու խղճալի վախճանը առավել ցայտունորեն է երևում Արշակավանի կործանման ժամանակ: Ամբոխը նրանից հաց ու ջուր էր պահանջում, զորք էր պահանջում թշնամու դեմ կռվելու, իրենց պաշտպանելու համար, բայց արքան զորք չունի, արքան հուսախաբությունից ու ցավից լայն բացված աչքերով, իր պարտությունն ու անզորությունը լրիվ ընդունած, քարացած դիտում էր ամբոխի խուճապահար փախուստը ու անձայն հեկեկում... ի՞նչ էր մնում անել, մարդ դառնալ և այդ փախչող մարդկանց նման մտածել միայն իր անձի ու մաշկի մասին: Իսկ իր երազնե՞րը, իր ծրագրե՞րը: Չէ՞ որ երկիրը պիտի դառնար անկախ ու միասնական, մարդիկ պիտի ապրեին առանց վախի ու առանց օտարի ճնշման, չէ՞ որ իրենց դաշնակցությունից պիտի ոտքի կանգներ Հայաստանը. դյուրահավատ արքան երկրի բախտը իր անուժ ձեռքերից վերցրել ու իր տկլոր ու քաղցած ժողովրդին էր տվել՝ ճակատագրական սխալ գործելով՝ վերացնելով տիրոջ և ծառայի հավերժական բաժանումը, մարդկանց զրկելով իրենց գլխավոր հարստությունից՝ իրավունքից:

Իսկ անաստված Շապուհը՝ նենգ խորամանկությամբ նոր ծուղակներ էր լարում. ամենասրբազան և անսուտ երդման նշանով՝ վարազգիր մատանիով կնքված ադով, նա Տիգրան էր հրավիրում Արշակին ու սպարապետ Վասակին...

Գեղարվեստական խոսքի պատկերավոր, ներգործուն ու հուզական ողջ հնարավորությունը Պ.Զեյթունցյանը կարծես ամփոփած լինի պատմավեպի վերջին հատվածներում. անսահման տառապանք, խոր դրամատիզմ, անցյալի ու ներկայի դառնակսկիծ հիշողություններ. ապրած անձնական կյանքի մոայլ, մարդկայնորեն բնական ու անկեղծ վերլուծություններ, խաթարված, խեղված երազանքներ, մոռացության բերդում կրած գրկանքներ, մտահոգություն Պապ որդու ու հայոց ամենագեղեցիկ, վսեմաշուք ու հպարտ սիրելի թագուհու՝ Փառանձեմի ճակատագրի հանդեպ, ափեափ կարոտ Հայաստան աշխարհի հանդեպ, կարոտ, որ հնչում է որպես երաժշտություն. <<Տեսնես հիմա ի՞նչ են անում Հայաստանում...Կարոտել եմ...Ձորերն առաջվա պես խո՞ր են դեռ, ն լեռները՝ նախկինի նման բարձրի՞կ: Ծիրանենիները էլի հարսնանո՞ւմ են գարնանը: Նոր հնձած խոտի թարմ հոտը խելքահան չի՞ անում նորից: Հեռուներից վերադարձող թռչունները անսխալ գտնո՞ւմ են հայոց երկինքը: Հղի կանայք դարձյալ ծնո՞ւմ են արու զավակներ: Շարունակո՞ւմ է ցեղը բազմանալ: Շինականների խմբապարը չի՞ դղրդացնում գետինը: Հայի աղոթքը հասնո՞ւմ է աստծուն: Ձմեռները էլի խի՞ստ են, ն ամառները՝ շո՞գ: Ձիևորի սուրը դիմանո՞ւմ է թեկուզ կարճատև դաղարին...Եվ ու՞ր է հիմա Հայաստանը, ո՞րն է հիմա, ի՞նչ սահմանների մեջ... Ո՞վ է նրա թագավորը...>> :

Արշակի ողբերգության պատճառը մեկնաբանում է Դրաստամատը. << -Դու հանդգնեցիր առաջ անցնել քո ժամանակից;Քեզ ոչ ոք չէր կարող հասկանալ:Անգամ քո ժողովուրդը; Դու մենակ մնացիր: ...Բայց դու միայն գլխով առաջ անցար ժամանակից, արքա՛, իսկ հոգով ու մարմնով կապված էիր քո ժամանակին՝ որպես բիրտ ու դաժան մի բռնապետ: Ա՛յս էր քո ողբերգությունը, արքա՛...>>:

Հավատարիմ մնալով պատմական դեպքերի զարգացման ընթացքին՝ Պ. Զեյթունցյանը ստեղծել է գեղարվեստական սքանչելի մի երկ, որի թողած տպավորությունը մեծ է ու անջինջ...

Պատմավեպը գրված է ստեղծագործական բուռն ներշնչանքով, չորրորդ դարի քաղաքական ու սոցիալական ծանր հանգամանքների բնական զգացողությամբ: Կերպարները կերտված են գեղարվեստական անզուգական վարպետությամբ, նրանց հոգեբանությունը զարմանալի խորաթափանցությամբ վերլուծելու մեծ հմտությամբ: <<Արշակ Երկրորդում>> պատմության շղթան չի ընդհատվում, այն կուռ է ու դինամիկ, հարուստ պատմական փոթորկահույզ անցքերով, որոնք արագասահ են, հետաքրքիր, գաղափարապես հագեցված: